ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔ

---

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 16

28 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2023թվական

## ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 21 անդամներ:

Բացակա էին՝ Գևորգ Բաբայանը, Կարապետ Բադալյանը, Արամ Գասպարյանը, Արման Թադևոսյանը, Հայկ Մելքոնյանը, Վարդուհի Սարգսյանը

**Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝** Վարդան Գաբրիելյան, Նվարդ Սահակյան, Արմինե Կոստանյան, Լևոն Գրիգորյան, Լուսինե Աստաբացյան, Հասմիկ Ավետիսյան, Սիրանուշ Իսկանդարյան

**Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Դավիթ Համբարձումյանը**

**Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Վարդան Գաբրիելյանը**

Լսեցին
***ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

* /Զեկ. ՎԱՐԴԱՆ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ/ *

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 65-րդ հոդվածի համաձայն **Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնքի ավագանին որոշում է.**

Հաստատել համայնքի ղեկավարի ներկայացրած Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 28-ի արտահերթ նիստի օրակարգը.

1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

2.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ, ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐՆ ՈՒ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ԵՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

3.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

4.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 14-Ի N 14-Ա ՈՐՈՇՄԱՆ ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Կողմ-21 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 332-Ա/

Լսեցին

***ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ, ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐՆ ՈՒ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ԵՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

*/Զեկ. ՆՎԱՐԴ ՍԱՀԱԿՅԱՆ/*

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ, 19-րդ կետերով ,,Տեղական տուրքերի և վճարների մասին,, օրենքի 8-րդ, 9-րդ, 11-րդ հոդվածներով, 12-րդ հոդվածի 1-ին մասով, 4.1-ին մասով, 13-րդ, 14-րդ հոդվածներով, ,,Աղբահանության և սանիտարական մաքրման մասին,, օրենքի 14-րդ հոդվածով Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնքի ավագանին որոշում է՝

1.Սահմանել Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնքում 2024 թվականի տեղական տուրքերի, վճարների տեսակներն ու դրույքաչափերը և արտոնությունները համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից և դրա գործողությունը տարածվում է 2024 թվականի հունվարի 1-ից ծագած հարաբերությունների վրա:

Կողմ-21 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 333-Ն/

Լսեցին
***ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ԱՐՄԻՆԵ ԿՈՍՏԱՆՅԱՆ/***

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, 83-րդ հոդվածի 2-րդ մասի և ,,ՀՀ Բյուջետային համակարգի մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի, ,,Նորմատիվ իրավական ակտերի մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի պահանջներով **Մասիս համայնքի ավագանին որոշում է.**

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնքի 2024 թվականի համախմբված բյուջեն՝

1) եկամուտների գծով՝ 9 053 929 990 դրամ:
2) ծախսերի գծով՝ 9 053 929 990 դրամ:
2. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնքի 2024 թվականի բյուջեի վարչական մասը՝
1) եկամուտների գծով՝ 4 915 625 800 դրամ:
2) ծախսերի գծով՝ 4 915 625 800 դրամ, նույն թվում բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդը՝ 1 061 910 900 դրամ, որից հատկացում բյուջեի ֆոնդային մասի ծախսերին 900 000 000 դրամ:

3.Հաստատել Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնքի 2024 թվականի բյուջեի ֆոնդային մասը՝
1) մուտքերի գծով՝ 4 138 304 190 դրամ:
2) ծախսերի գծով՝ 4 138 304 190 դրամ:
4. Հաստատել հատված 1-ով նախատեսված 2024 թվականի համայնքի բյուջեի եկամուտներն ըստ առանձին եկամտատեսակների համաձայն հավելված 1-ի:
5. Հաստատել հատված 2-ով նախատեսված 2024 թվականի համայնքի բյուջեի ծախսերն ըստ գործառական դասակարգման համաձայն հավելված 2-ի:
6. Հաստատել հատված 3-ով նախատեսված 2024 թվականի համայնքի բյուջեի ծախսերն ըստ տնտեսագիտական դասակարգման համաձայն հավելված 3-ի:
7. Հաստատել հատված 6-ով նախատեսված 2024 թվականի համայնքի բյուջեի ծախսերն ըստ գործառական և տնտեսագիտական դասակարգման համաձայն հավելված 4-ի:
8. Թույլատրել համայնքի ղեկավարին կատարել փոփոխություն տարվա ընթացքում հաստատված բյուջեի ծախսային ծրագրերի հոդվածների միջև մինչև 15 % -ի չափով:
9. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-21 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 334-Ն/

Լսեցին

***ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 14-Ի N 14-Ա ՈՐՈՇՄԱՆ ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ/***

Ղեկավարվելով ,,Նորմատիվ իրավական ակտերի մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով և 3-րդ մասով՝ **Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնքի ավագանին որոշում է**

1.Մասիս համայնքի ավագանու 2023 թվականի փետրվարի 14-ի <<ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒՄ ՄԱՍԻՆ>> N 14-Ա որոշման հավելվածի 5.1 կետի <<ա>> *ենթակետը շարադրել նոր խմբագրությամբ՝ <<շենքեր կառուցել ճարտարապետական ժամանակակից լուծումներով 4-5 հարկանի, անհրաժեշտության դեպքում բազմահարկ,* <<գ>> ենթակետի <<*Ծածկերը կարող են լինել թիթեղյա, կղմինդր>> բառերից հետո ավելացնել <<գունավոր՝ շագանակագույն կամ շագանակագույնին մոտարկված>> բառերը:*

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ-21 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 335-Ա/

Ավագանու անդամներ

ԳԱՅԱՆԵ ԱՀԱՐՈՆՅԱՆ

ԱՐՏԱԿ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

ԱՆՈՒՇ ԱՍԱՏՐՅԱՆ

ԱՐԹՈՒՐ ԱՎԱՆԵՍՅԱՆ

ԿԱՐԵՆ ԱՐԱՄԱՅԻՍՅԱՆ

ՆՈՒՆԵ ԱՖՐԻԿՅԱՆ

ԱՐՍԵՆ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ԿԱՐԻՆԵ ԹՈՎՄԱՍՅԱՆ

ԼՈՒՍԻՆԵ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԿԱՐԵՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՆՈՐԱՅՐ ՀԱԿՈԲՅԱՆ

ԴԱՎԻԹ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

ԿԱՐԱՊԵՏ ՄԵՍՐՈՊՅԱՆ

ՄԵԼԻՔ ՆԱԶԱՐՅԱՆ

ԱՆԻ ՆԱՀԱՊԵՏՅԱՆ

ԵՐԵՄ ՇԱԲՈՅԱՆ

ԷԼՄԻՐԱ ՈՍԿԱՆՅԱՆ

ՆԱԻՐԱ ՎԱՆՅԱՆ

ԷԴՎԱՐԴ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ԵԼԻԶԱՎԵՏԱ ՕՀԱՆՋԱՆՅԱՆ

ՋՈՀՐԱԲ ՕՍԵՅԱՆ

*Համայնքի ղեկավար*

ԴԱՎԻԹ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ____________________

*Նիստն արձանագրեց՝*

Վարդան Գաբրիելյանը ________________________________

2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28-Ի
ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ
ՑՈՒՑԱԿ

2023 թվականի դեկտեմբերի 28-ի ավագանու հերթական նիստի

| Հ/Հ | Ազգանուն | Անուն | Հայրանուն | Ստորագրություն |
|---|---|---|---|---|
| 1 | Համբարձումյան | Դավիթ | Միհրի | |
| 2 | Հակոբյան | Նորայր | Արեգի | |
| 3 | Եղիազարյան | Արսեն | Գագիկի | |
| 4 | Արամայիսյան | Կարեն | Գագիկի | |
| 5 | Օհանջանյան | Ելիզավետա | Գրիգորի | |
| 6 | Օսեյան | Զոհրաբ | Հայկի | |
| 7 | Կարապետյան | Կարեն | Բաբկենի | |
| 8 | Նահապետյան | Անի | Համլետի | |
| 9 | Շաբոյան | Երեմ | Մանվելի | |
| 10 | Ավանեսյան | Արթուր | Արկադիի | |
| 11 | Աֆրիկյան | Նունե | Ջանիբեկի | |
| 12 | Վարդանյան | Էդվարդ | Հրաչյայի | |
| 13 | Սարգսյան | Վարդուհի | Ռուբիկի | |
| 14 | Վանյան | Նաիրա | Մարտիկի | |
| 15 | Նազարյան | Մելիք | Դմիտրիի | |
| 16 | Մելքոնյան | Հայկ | Ներսեսի | |
| 17 | Թադևոսյան | Արման | Աշոտի | |
| 18 | Գասպարյան | Արամ | Վլադիմիրի | |
| 19 | Ասատրյան | Անուշ | Ռոլիկի | |
| 20 | Բաբայան | Գևորգ | Միշայի | |
| 21 | Խաչատրյան | Լուսինե | Գառնիկի | |
| 22 | Ոսկանյան | Էլմիրա | Համլետի | |
| 23 | Բադալյան | Կարապետ | Նամեստի | |
| 24 | Մեսրոպյան | Կարապետ | Բագրատի | |
| 25 | Թովմասյան | Կարինե | Գևորգի | |
| 26 | Անդրեասյան | Արտակ | Մեհրաբի | |
| 27 | Ահարոնյան | Գայանե | Գեղամի | |